ՔԱՂԱՔԱՑԻ-ԳՐՈՂԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ընթացիկ տարվա մայիսի 3-ին մեզանից անժամանակ հեռացավ սովետական անվանի գրող և հրապարակախոս Հրաչյա Քոչարը:

Անչափելի ծանր է կորուստը՝ մանավանդ սովետահայ գրականության ու հասարակայնության համար, որոնց առավել աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկն էր նա:



Հրաչյա Քոչարը պատկանում է այն հեղինակների շարքին, որոնց ստեղծագործությունը սերտորեն ասոնչվում է կյանքին և նրա հուզող խնդիրներին: Նրա գրած էջերում տրոփում էր ժամանակաշրջանի սիրտը, խլրտում ժողովրդի կենսագգացությունը, լսելի դառնում նրա խղճի ձայնը:

Հինգ-վեց տարեկան մանուկ էր նա, երբ վրա հասավ 1915 թ. մեծ եղեռնը: Դահավիժած անցքերից բնավեր եղավ նրա հայրենի տունը, և ալաշկերտցի հայ գյուղացու զավակը հարազատների հետ բռնեց գաղթի ու տառապանքի դաժան ճանապարհը:

Հայաստանի սովետական կարգերի տարիները երիտասարդ Հրաչյա Քոչարին դուրս բերեցին վերածնված հայրենիքի լուսաշող պողոտան: Նա եղավ սովետական նոր կյանքի խանդավառ կերտողներից ու վերապատկերողներից մեկը: Ալաշկերտցի գյուղացու զավակը դարձավ սոցիալիստական Հայաստանի հրաշունչ պրոպագանդիստը:

* * *

Հրաչյա Քոչարի գրական-հասարակական տարերքը կոփվում էր տակավին Հայրենական պատերազմին նախորդող տարիներին: Մեծ թափ ստացավ նրա

տաղանդի զարգացումը պատերազմի մարտադաշտերում, ուր գինվորագրված էր որպես քաղղեկ: Գործող բանակից հղված նրա թղթակցություններ գալիք հաղթանակին մասնակից էին դարձնում ռազմաղաշտի համար աշխատող միլիոնի ընթերցողներին: Պատերազմի նախատներում, ինչպես և նոպատերազմյան օրերին, նրա բոցաշունչ խոսքը ներգործում էր որպես հաղթանակին ծառայող գնդացիր: Նրա հոդվածները ողողված էին մարտնչող հայրենասիրությամբ· հուզում էին ընթերցողների միտքը և դեպի հաղթանակ նպատակամղում նրանց: Պատերազմից ստացած հարուստ տպավորություններով ու դրանց հետ կապված խոհերով է հագեցած նրա «Մեծ տան զավակները»:

Միայն արձակագիր ու հրապարակագիր չէր Հրաչյա Քոչարը, այլև հիմնավոր դիտելիքներով ու զորեղ տրամաբանությամբ օժտված հրապարակախոս և պոլեմիստ, գրականագետ և քննադատ, համակող ու համոզիչ խոսքի վարպետ:

Նրա հրապարակախոսության մեջ կար մտքի հստակություն և առիթքնող ջերմություն: Լինելով խորապես պարտիական մարդ՝ նրա խոսքը ազատ էր սկզբունքների դոգմատիզմից և հեռանկարների մշուշից: Անվախ ու սուր նրա միտքը որոնում էր ճիշտ ելք և շիտակ կողմնորոշում: Նրա քաղաքական ու մշակութային խոհերը անհամատեղելի էին ազգայնական խտրանքի ու ինքնամեծար այլամերժության հետ:

Հրաչյա Քոչարը գիտակցում էր, որ սովետահայ գրողը չի կարող հանգչում գտնել, երբ անտարբեր է դեպի մյուս ժողովուրդների խնդությունն ու վիշտը: Հումանիզմն ու ժողովրդասիրությունը, հայրենասիրությունն ու միջազգայնականությունը նրա մոտ օրգանապես շաղկապված էին ու միաձույլ: Անդրադարձնելով իր ժողովրդի սոցիալիստական այսօրը,— ասում էր նա,— սովետահայ գրողը դրանով իսկ բարգման պիտի դառնա մյուս ժողովուրդների սոցիալական հույզերին:

Նոպատերազմյան տարիների իր գրական-հրապարակախոսական էջերում Հրաչյա Քոչարը գրում էր հայ ժողովրդի պատմության այն դրվագների մասին, որոնց դերակատարները մեզ ժամանակամերձ գործիչներ են և որոնց անունների հիշատակումն իսկ անբարեհուսության նշան էր անհատի պաշտամունքի ֆուրմերի աչքում: Գրողն անդրադառնում էր անցյալին ոչ թե մեծարելու կամ այպանելու, այլ այն խորքքննելու և կենարար հետևություններ անելու համար: Անցյալը կորդացած այն գետինն էր, որ անհրաժեշտ էր պեղել ու մշակել՝ ժամանակակից կենիոներ հանգուցալուծելու և առկա դժվարություններ հաղթահարելու համար: Համոզված էր, թե անցյալի լուսաբանությունը անհրաժեշտ է պատմական կեղծիքներ ու վնասաբեր պատրանքներ հերքելու և ժողովրդական գանգվածների ու հատկապես հասունացող երիտասարդության դաստիարակության առաջ նոր ուղիներ հարթելու համար: Կարևոր էր համարում Լենինի և նրա հայ գործակիցների կատարած աշխատանքը· հետազոտության և շարադրանքի արժանի գտնում արևմտահայ ազատագրական շարժումների պատմությունը: Գիտեր, որ անհնար է գրել հայ ժողովրդի նշմարիտ պատմությունը, երբ ֆոդագերծված չեն նրան Դեր Զորի անապատները քշող մռայլ հանգամանքները: Այն հանձնարարականում, ու գրեց Հրաչյա Քոչարը 1915 թ· Եղեռնին նվիրված նորերս լույս տեսած՝ «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ» Ա. Մնացականյանի գրքի մասին, նա ցեղասպանության տմարդի արարքների մոռացումը

դրանց արծարծումից ավելի մեծ հանգամանք է համարում իրավագիտությունն:

Մահասարսուռ եղեռնի հիսնամյակը Հրաչյա Քոչարը դիմավորեց ժողովրդի անմահության գաղափարը կերպավորող «Սպիտակ գրքով»: Հայրենի եզերքի կարոտը, հայրենի տան վերաշինման տենչը նա շաղկապեց ժողովրդի զոյատևման հիզերի հետ: Ազգային լեզվի ու մշակույթի կենսարար ուժը նա համադրեց դրանց հարատևության համար մղված պայքարին: Գրքի հեղինակը ի հայտ բերեց ժողովրդի հոգերանության խոր զգացությունն և կարողացավ վեր հանել նրա ողբերգությամբ նվաճված իմաստությունը: Ռեալիստորեն գրված գրքի էջերից հառնում են ժողովրդի մարդկանց կենդանի կերպարները: Հեղինակի խոր կարեկցությամբ ու նուրբ հումորով գծագրված գիրքը խորապես հուզական է և տպավորիչ մանավանդ նրանով, որ նրա պերսոնաժները հանդես են բերված ժողովրդի վերապրած օրհասի և նրա հավաքական տվայտանքների ու ապրումների ծայրահեղ լարման պատմական հետնախորքի հետ սերտորեն շաղկապված:

* * *

Մեր վրա հասավ գրողի հասունության ու բեղմնավորության բուռն շրջանում: Ճիշտ ասվեց նրա մասին, թե մեռավ ինչպես մարտիկն է մեռնում դիրքերի վրա՝ իր հետ տանելով բազմաթիվ չիրագործված իղձեր ու մտահղացումներ:

Հրաչյա Քոչարը չկա այսօր: Սակայն կա ու կմնա քաղաքացի-գրողի հոյակապ կերպարը, ժողովրդի կյանքով և իմաստությամբ, իղձերով և երազներով բեղմնավորված գրականության ու հրապարակախոսության անմար նրա օրինակը:

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ